10 նոյեմբերի 2011 թվականի N 1607 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 1038-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 9-ի N 1933-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1038-Ն որոշման հավելվածի Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) ցանկի 011000 տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

011000	Ակտուարական և ֆինանսա-կան մաթեմատիկա	62	Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի բակալավր
		68	Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի մագիստրոս

».

2) ցանկը 032700 տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

032800	Անվտանգային գիտություններ	68	Անվտանգային գիտությունների մագիստրոս

».

3) ցանկը 032800 տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

032900	Կովկասագիտություն	62	Կովկասագիտության բակալավր
		68	Կովկասագիտության մագիստրոս

».

4) ցանկը 040300 տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 040400 տողով.

«

040400	Հասարակայնության հետ կապեր	68	Հասարակայնության հետ կապերի մագիստրոս

».

5) ցանկի 140100 տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

140100	Ջերմաէներգետիկա	62	Ճարտարագիտության բակալավր
		68	Ճարտարագիտության մագիստրոս

».

6) ցանկը 140300 տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 140400 տողով.

«

140400	Ատոմային էլեկտրական կայաններ և տեղակա-յանքներ	62	Ճարտարագիտության բակալավր
		68	Ճարտարագիտության մագիստրոս

».

7) ցանկը 220200 տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 220300 տողով.

«

220300	Տեխնոլոգիական գործընթացների (պրոցեսների) և արտադրության ավտոմատացում (ատոմային էներգետիկայի ճյուղում)	62	Ճարտարագիտության բակալավր
		68	Ճարտարագիտության մագիստրոս

».

8) ցանկի «300000-Ռազմական կրթություն» տողից հետո 310000 և 310100 տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

320000	Ոստիկանական կրթություն		
320100	Ոստիկանական գործ	62	Ոստիկանության բակալավր
		68	Ոստիկանության մագիստրոս

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: